ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը և Երևանի պետական համալսարանը հրավիրում են

միջազգային գիտաժողով

ԱՐՑԱԽԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ

խորագրով՝ նվիրված արցախյան շարժման նոր շրջափուլի 30-ամյակին, որը տեղի կունենա 2018 թ. փետրվարի 23-ին, ժամը 10^{00}-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում:

(Երևան, Մ. Բաղրամյան պող., 24)

Գիտաժողովում կներկայացվեն զեկուցումներ, որոնցում համակողմանի անդրադարձ կլինի Արցախի հիմնահարցերին՝ Հայոց պետականության կայացման ու պահպանման համար համընդհանուր պայքարի համատեքստում: Կմատնանշվի, որ շնորհիվ Վարդանանց ու Վահանանց պատերազմների ընթացքում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի, 480-ական թվականներից Հայոց պետականությունը ինքնավար տարբերակով վերականգնվեց ինչպես Արևելյան Հայաստանի կենտրոնական հատվածում՝ Արարատյան երկրում, այնպես էլ Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ:

Հետագա դարերում Արցախում Առանշահիկները շարունակեցին պետականության պահպանման ավանդույթները Հասան-Ջալալյանների և տոհմիկ ազնվականական այլ տների կողմից: Ուշ միջնադարում Արցախում պետականության յուրօրինակ դրսևորումներ եղան հայկական սղնախներն ու մելիքությունները: Պատահական չէ, որ Արցախի դերը խիստ կարևորվեց 18-րդ դ. երկրորդ կեսին առաջ քաշված ազատագրական ծրագրերում:

Արցախը ակտիվորեն ներգրավվեց նոր ժամանակներում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի մեջ: Նորօրյա պետականություն ստեղծվեց Արցախում 1918-1920 թթ., որը արցախահայության 1920 թ. ապրիլի 25-ի 9-րդ համագումարի որոշմամբ իրեն հռչակեց Հայաստանի Հանրապետության մաս: Խորհրդային տարիներին բոլշևիկյան ղեկավարության ոչ հայանպաստ քաղաքականության պայմաններում Արցախը կարողացավ պահպանել իր պետականության որոշակի տարրեր՝ 1923 թ. հուլիսի 7-ին կազմավորված ԼՂԻՄ-ի կարգավիճակով, իսկ 1991 թ. սեպտեմբերի 2-ին կյանքի կոչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Ծրագիր

23 փետրվարի 2018 թ. ,ժամը 10^{00}ին
(ՀՀ ԳԱԱ նախագահության
նիստերի դահլիճ)

Բացման խոսք՝ ՀՀ ԳԱԱ նախագահ
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ողջույնի խոսքեր՝ ՀՀ ՆԱԽԱԳԱՀ
ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ
Արցախի հանրապետության նախագահ
ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆ
Ամենայն Հայոց Կաթողիկոս
Ն.Ս.Օ.Տ.Տ. **ԳԱՐԵԳԻՆ Բ**
Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս
Ն.Ս.Օ.Տ.Տ. **ԱՐԱՄ Ա.**
ՀՀ ԳԱԱ ՀՀԳԲ ակադեմիկոս քարտուղար
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ
ԵՊՀ ռեկտոր **ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ**

Զեկուցումներ՝

1. **ՄՈԴԵՍՏ ԿՈԼԵՐՈՎ** - Ազգային պետություններ» սկզբունքը Ստալինյան ԽՍՀՄ-ում
2. **ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ** - Արցախը Հայոց պետականության պատմության հոլովույթում
3. **ՍՏԱՆԻՍԼԱՎ ՏԱՐԱՍՈՎ** - Հայաստանի Հանրապետության և Արցախի անվտանգությունը Մեծ Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքականության համատեքստում

Ընդմիջում՝ 12^{00} –13^{00}

4. **ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** - Արցախը 1918 - 1920 թթ.
5. **ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ** – Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացումը
6. **ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ** – ԼՂԻՄ-ի կազմավորումը և տարածքային կորուստները (1920 - 1930-ական թթ.)
7. **ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ** - Ազատագրական պայքարի դրսևորումները ԼՂԻՄ-ում (1920 – 1940-ական թթ.)
8. **ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ** - Արցախյան շարժման նոր շրջափուլը
9. **ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ** - Արցախյան հիմնախնդրի լուծման իրավական հիմքերը
10. **ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐՅԱՆ** - Անկախության գաղափարի ձևավորումը Արցախյան շարժման ընթացքում 1988 - 1991 թթ.
11. **ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ -** Արցախյան շարժման և պատերազմի ռազմաքաղաքական փուլերը
12. **ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - Հայ ռազմարվեստը Արցախյան պատերազմում